Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Ի պատասխան № TIIG-03 «Մեքենաների և սարքավորումների գնում համայնքների համար» մրցույթի վերաբերյալ 26.06.2019թ. Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

1. Հարց՝ Հարգելի գործընկեր խնդրում եմ տրամադրեք ռուսերեն հրավեր համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի մարտի 25-ի թիվ 01.1/26/4873-2019 գրությամբ։
   Կից ներկայացնում եմ գրությունը։

Պատասխան՝

Հարգելի՛ հայտատու, ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի 25.03.2019թ-ի թիվ 01.1/26/4873-2019 գրությունում նշված է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պատվիրատուներն են պարտավոր հրավերները և հայտարարությունները հրապարակել նաև ռուսերեն լեզվով, որոնք կիրառում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված գնման ընթացակարգերը։

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար կազմակերպված «Մեքենաների և սարքավորումների գնում համայնքների համար» № TIIG-03 ծածկագրով մրցույթն իրականացվում է համաձայն Համաշխարհային բանկի «Ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման» 2011թ. վերանայված 2014թ. ուղեցույցի: Համաձայն մրցութային փաթեթի Հայտաթերթ II Բաժնի ՑՀ 10.1 կետի հայտի լեզուն հայերենն է։

Հարգանքով,

Ռոզա Դանիելյան
№ TIIG-03 մրցույթի քարտուղար
ՀՏԶՀ

26 հունիսի 2019թ.